«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ N 2

1 նոյեմբերի 2019 թվականի

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանի պահանջներին համապատասխան: 2018-2019 ուսումնական տարում համալսարանն ունեցել է առկա ուսուցման բակալավրիատի 1003, հեռակա ուսուցման բակալավրիատի 382 և առկա ուսուցման մագիստրատուրայի 359 շրջանավարտներ, որոնց համար կազմակերպվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններ: Ռեկտորատը, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինը, դեկանատները և ամբիոնները բավական աշխատանք են կատարել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպումը պատշաճ մակարդակով իրականացնելու ուղղությամբ: Այդ նպատակով ժամանակին ձևավորվել են 29 մասնագիտական հանձնաժողովներ:

Առկա ուսուցման բակալավրիատում դրական գնահատականով պաշտպանվել է 990 (98.9%) ավարտական աշխատանք, որից 478-ը (47.6%) արժանացել են «գերազանց», 253-ը (25.2%)՝ «լավ» գնահատականների: Նախորդ տարիների շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել է 7 ուսանող: 259 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ (նախորդ տարվա 283-ի դիմաց):

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը գերազանցապես կազմակերպվել է ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունից 100% արդյունք արձանագրվել է 17 մասնագիտություններում:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ավարտական աշխատանքների պաշտպանությանը թույլատրված 382 ուսանողից 359-ը (94%) ստացել են դրական, 16-ը՝

«անբավարար» գնահատականներ, իսկ 7-ը չեն ներկայացել: Պաշտպանության արդյունքում 25 ուսանող ստացել է «գերազանց» (նախորդ տարի՝ 59-ը), 52-ը՝ «լավ» գնահատականներ (նախորդ տարի՝ 80-ը): Գերազանցության դիպլոմ ստացել է ընդամենը 5 շրջանավարտ:

Առկա ուսուցման մագիստրատուրայում պաշտպանության է ներկայացվել 359 թեզ (առաջադիմությունը կազմել է 98.0%), որից 242-ը (67.4%) արժանացել են «գերազանց», 57-ը (15.8%)՝ «լավ», 53-ը (14.7%)՝ «բավարար» գնահատականների Նախորդ տարիների շրջանավարտներից մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել է 2 ուսանող, բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: 179 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ (49.8%):

Խորհուրդը միաժամանակ նշում է, որ ինչպես ավարտական աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի պաշտպանության կազմակերպման աշխատանքներում առկա են թերություններ և լուծում պահանջող խնդիրներ:

Ավարտական աշխատանքներում ու մագիստրոսական թեզերում տեղ գտած առավել էական թերությունները և բացթողումներն են.

1) Աշխատանքների մի մասում օգտագործված գրականության ցանկերը շատ աղքատիկ են: Որոշ աշխատանքներում հանդիպում են համացանցից կամ պետական մարմինների պաշտոնական կայքում տեղակայված փաստաթղթերից արտատպված նյութեր՝ առանց հղումների: Որոշ թեմաներ արդիական չեն: Շատ դեպքերում բացակայում են թեմայի շարադրանքի տրամաբանությունը:
2) Ինչպես ավարտական աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի թեմաներում դեռևս նկատվում են ոչ միայն նախորդ տարիների թեմաների կրկնություններ, այլ տվյալ տարվա տարբեր ուսուցման ձևերում թեմաների կրկնություններ: Որոշ աշխատանքներում թեմայի վերնագիրը և շարադրանքը չեն համապատասխանում միմյանց:
3) Աշխատանքների մի զգալի մասին նախորդած փորձառությունը չի կազմակերպվել թեմային առնչվող կազմակերպություններում, միտված չէ որոշակի խնդիրների լուծման և գործնական վերլուծության մասը շեղված է հետազոտության նպատակից ու չի առնչվում հետազոտության իրական օբյեկտին (և առարկային):
4) Աշխատանքների մի մասում և հատկապես ավարտական աշխատանքներում բացակայում են քանակական, որակական վերլուծությունները, բավարար չեն տնտեսական, իրավիճակային գնահատումները: Սակավ են այն աշխատանքները, որտեղ վերլուծություններն իրականացվել են մաթեմատիկական ու

վիճակագրական մեթոդների օգնությամբ: Չեն օգտագործվում համակարգչային փաթեթներ:

5) Կան դեպքեր, երբ մագիստրոսական թեզերն իրենց գիտական խորությամբ և ծավալով չեն տարբերվում ավարտական աշխատանքներից:
6) Կարծիքների և գրախոսությունների մի մասը չունի համապատասխան ձև, բովանդակություն, չի պարունակում հիմնավորված եզրահանգումներ, չի համապատասխանում սահմանված պահանջներին:
7) Նկատելի է որոշ հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների միօրինակությունը:
8) Կան ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր, որոնք ներկայացված են բազմաթիվ լեզվաոճական ու տեխնիկական սխալներով և առանց խմբագրման:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հանձնարարել ռեկտորատին և գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական ու գիտամեթոդական հանձնաժողովներին՝

1) մշակել և գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել ՀՊՏՀ-ում հետազոտական աշխատանքների իրականացման և հրապարակման և հետազոտական էթիկայի պահպանման կանոնակարգ:

2. Հանձնարարել դեկաններին և ամբիոնների վարիչներին՝

1) ավարտական աշխատանքների, 90 կրեդիտ բեռնվածությամբ և 1,5 տարի տևողությամբ առկա ուսուցման մագիստրատուրայի և հեռակա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի համար մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա նոյեմբերը, իսկ 120 կրեդիտ բեռնվածությամբ և 2 տարի տևողությամբ առկա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի համար մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա մարտը ամբիոններում քննարկել, ֆակուլտետների խորհուրդների նիստերում հաստատել և ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին ներկայացնել ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի արդիականացված թեմաների, կատարող ուսանողների և ղեկավարների ցանկը,
2) ավարտական աշխատանքների և հեռակա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի թեմաների, հետազոտության խնդիրների

ձևակերպման և օբյեկտի հստակեցման համար ամբիոններում իրականացնել քննարկումներ գործատուների, մասնագիտական ասոցիացիաների և հետազոտական հաստատությունների հետ,

3) բացառել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ու շարադրանքների կրկնությունները.
4) խիստ կարևորել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների և անդամների ընտրության գործընթացը,
5) առավելագույնս ապահովել ավարտական աշխատանքների արտաքին գրախոսում,
6) մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսությունը պատշաճ կարգով կազմակերպելու և գրախոսների հետ պայմանագրային հարաբերությունները կարգավորելու համար պաշտպանությունից առնվազն 3 ամիս առաջ ուսումնական գործընթացի կազմակերպման և իրավաբանական բաժիններ ներկայացնել ամբիոնի թեզերի գրախոսների ցանկը,
7) ներկայացվող պահանջներին չհամապատասխանող կարծիքներ և գրախոսություններ ներկայացնողների հարցը դարձնել քննարկման առարկա:

3. Սույն որոշումը քննարկել բոլոր թողարկող ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. նոյեմբերի 1
Երևան